դաշնեերից երևում է, որ բուսաբանների այդ խումբը շատ դոհ է մնացել մեր երկրում կատարած իր ճանապարհորդութիւնից։ Խումբը երէկ երևկոյեան Թիֆլիսից մեկնեց Բագու, որտեղից կանցնի Նիժնի-Նովգորոդի վրայով Մոսկվա և ապա արտասահման։

✦ Օգոստոսի 24-ին Ա. Մ. Տէրտէրեանի նախագահութեամբ տեղի ունեցաւ քաղաքային դումայի անտեսական մասնաժողովի նիստը քննելու հացավաճառների ներկայացրած բողոքները հացի վերջին սակագնի դէմ։ Նիստի սկզբում բացատրութիւնները տալու համար թոյլատրվեց ներկայ լինելու հացափուռների ներկայացուցիչներին։ Մասնաժողովը քննելով բօրսային կոմիտէի տուած տեղեկութիւնները ալիւրի գների մասին և համոզվելով, որ գները աւելանում են, արդարացի համարեց փուռների հացի սակագինը աւելացնել, նշանակելով՝ առաջին տեսակի համար 4½ կօպէկ փունտը, երկրորդի համար՝ 4 կ. և երրորդ տեսակի համար՝ 3½ կօպէկ։ Թոնրահացերի համար. առաջին տեսակի փունտը՝ 4½ կօպէկ, երկրորդը՝ 4 կ. և երրորդը՝ 3½ կ։ Լաւաշ հացի փունտը. առաջին տեսակը՝ 4½ կօպէկ, երկրորդը՝ 4½ կօպէկ։

✦ Օգոստոսի 25-ին Թիֆլիսի 4-րդ մասի հաշտարար դատաւոր Վասականը 7-րդ ոստիկանամասի ազատ թաղական վերահսկիչ Քանանեանի հետ միասին Հալաբարում տեղն ու տեղը քննեց հացի սակագինը խախտող հացավաճառ Դէօրգէլիանիի, Դիւլիշվիլիի և Կախէտատէի վրա կազմված արձանագրութիւնների գործը և մեզաւոր ճանաչելով ենթարկեց իւրաքանչիւրին 25-ական ռուբլի տուգանքի։ Երեք օրվայ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ, հաշտարար-դատաւորի կայացրած դատավճիռը ի կատար կածվի։

✦ Երէկ, օգոստոսի 27-ին, բժիշկների համար կազմակերպված կուրսերում պրիվատ-դոցենտ Լ. Տարասկվիշը կարդաց իր վերջին դասախօսութիւնը շիջուկների մասին, իսկ Մոսկվայի համալսարանի պրիվատ-դոցենտ Ե. Մարտինօվսկին երէկվանից սկսեց իր դասախօսութիւնները։

✦ Թիֆլիսի 2-րդ առնտրական դպրոցը մտնելու համար խնդիրք ներկայացնելու ժամանակամիջոցը յետաձգված է մինչև սեպտեմբերի 1-ը։

✦ Մի խիստ չքաւոր կին, որի ամուսինը անընդունակ է աշխատանքի և գլուխ առած հեռացած է իր տնից, կամենալով իր մանկահասակ երեք զաւակներից մէկին մացնել տեղական ծիսական դպրոցներից մէկը՝ անզօր է վճարելու դպրոցի պահանջած կնաս-ուսումնավարձ 5 ռուբլին, որի պատճառով և երեխային սպառնում է իր տեղը դպրոցում կորցնելու։ Թշուառ մայրը խնդրում է բարերար անձերին զոհաբերել 5 ռուբլի՝ ազատելով իր 9 տարեկան երեխային փողոցները անսպատակ թափառելուց։ Դրամը կարելի է յանձնել «Մշակի» գրասենեակին՝ հասցնելու վերոյիշեալ դպրոցի վարչութեան։

✦ Թաղիևի գործը Թիֆլիսի դատաստական պալատում կը քննվի սեպտեմբերի 21-ին։ Մակկալովի փոխարէն կը պաշտպանի նրան Կազարինովը։

✦ Օգոստոսի 25-ին, առաւօտեան 7 ժամը 6-ին, Պետերբուրգի բնակչուհի օր. Ալէքսանդրա Բարանովան, առանց որևէ պաշտօնի, կամենալով կենաղրկել իրան՝ ընդունել է անշնչ քանակութեան նաշատիրի սպիրտ։ Թունաւորվածին տարել են Միքայէլեան հիւանդանոց։ Նրա կեանքը վտանգից զերծ է։

✦ Օգոստոսի 26-ին, Թիֆլիսեցի ռաւոր Կարապետ Ա. Թորոսեանցը, որ բնակվում է Մբլնի նրբափողոցի № 6 տանը, մտնելով իր ծանօթուհի Թիֆլիսեցի Սօֆիա Պօպովայի բնակարանը, որ գտնվում է Դիւմվակի զառիվայրի № 2 տանը, սկսում է տանտիկնոջ հետ վէճի բռնվել, որի ժամանակ իր մօտ ունեցած կօշկակարի դանակով մարմնի երկու տեղից վերք է հասցնում Պօպովային։ Վերջինս տարված է Միքայէլեան հիւանդանոցը, իսկ յանցաւորը ձերբակալված է։ Վիրաւորվածի կեանքը վտանգից զերծ է։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ատրպատականի Կենտ. դպրոցի տեսուչ Յոնան Դաղմեանին)*

—

Թաւրիզ, 18 օգոստոսի

«Հօրիզոնի» № 175-ում կարդացի ձեր հայհոյալից ոտնով գրած մի քանի տող հերքումն իմ այն ակնարկութեան դէմ, որ համեստօրէն գրել էի «Մշակում» ձեր և ձեր տիկնոջ թոքախտի հիւանդութեան առիթով զգայնել տալու Թաւրիզի հայ հասարակութեան և առաւելապէս կենտ. դպրոցի հոգաբարձութեան, որ չանան պահպանել դպրոցական սերնդի ֆիզիկական առողջութիւնը պատահական վարակումից, ի նկատի առնելով և այն, որ՝ իբրև ուսուցիչներ, բացի շփումն ունենալուց աշակերտների հետ, նաև ուսումնարանը ձեր բնակարանն էք դարձրել, ուր միշտ յարաբերութեան մէջ են ձեզ հետ աշակերտաշակերտուհիները։ Դուք, պ. Յոնան, փոխանակ փաստացի և համոզիչ բացատրութիւններ տալու, գրել էիք մի երկու մութ, անհամարձակ և անհնդրիտ խօսք, փափաքելով իմացնել ձեր ազգականներին և բարեկամներին, որ հիւանդ չէք երբէք. և սկսել էք բուռն զայրոյթից փրփուր ժայթքել և ձեզ համար շատ անվայել բառեր շպրտել իմ հասցէին։ Դուք, որ Ժընևվում բարձր կրթութիւն առնող ինտելիգենտի յատկութիւնն ունէք և Ատրպատականի բարձրագոյն կրթարանի վարիչն էք։ Հայհոյելու ոճով դուք ձեր անհատականութիւնն էք հանդէս բերել։ Le style est l'homme.

Անցնենք բուն հարցին։

Ձեր հիւանդութիւնը Թաւրիզում անհերքելի փաստ է։ անգամ անցած ուսումն. տարվայ կիսից սուր կերպարանք ստանալով՝ նա ձեզ դատապարտեց թերակատար ուսուցման։ Հոգաբարձութիւնը, կանխամտածելով հարկաւ ձեր անելիքը, արձանագրութիւն կազմեց և յորդորեց ձեզ, որ երկու բժշկի ստորագրութեամբ մի վկայագիր ներկայացնէք և ապա ստանձնէք ձեր պաշտօնը։ Դուք գիտութեամբ մոռացութեան տուիք գլխաւորապէս մի բան, որ աւելի շուտ վկայական պէտք էր առնէիք Թաւրիզի այն բժիշկներից, որոնք՝ ժամանակի ընթացքում բժշկական օգնութիւն են հասցրել ձեզ և աւելի լաւ են ճանաչում ձեր հիւանդութիւնը. այդ չարիք. այլ որչափ ես կարողացայ ստուգել հաստատ աղբիւրից, Դիլիջանից ուղարկեցիք վկայագիր երկու անձնօք, զուցէ ձեզ բարեկամ և կուսակից բժիշկների ստորագրութեամբ. թէպէտ նրանց տուած վկայական իսկ խուսափողական հանգամանք ունի, քանի որ վկայում են, թէ դուք երբեմն ունեցել էք արդարև տուբերկուլօզ հիւանդութիւնը, սակայն այժմ վերքերի բերանները փակվել են, ուստի և կարող էք վարել ձեր պաշտօնը։

Վերևի պատմածներից երևում է նախ՝ որ դուք այդ հիւանդութիւնն ունեցել էք, որը չը խոստովանցիք ձեր հերքմագրում։ Երկրորդ՝ իմ կարծիքով, ձեր կազմել տուած վկայականը օրինական բնոյթ չունի և մի գրոշ չարժէ. դա նրա համար, որ Եւրոպայում ընդունված սովորութիւն է արդէն, որ հիւանդութիւնը ժամանակաւորապէս դադարած լինելու դէպքում՝ մասնագէտ բժիշկները հիւանդի թոքը կամ կոկորդի լորձուքը քննութեան, անալիզի են ենթարկում լաբորատորիաներում և ըստ այնմ վէճո կայացնում հիւանդութեան գոյութեան կամ չգոյութեան մասին և յետոյ միայն վկայական տալիս։ Արդեօք այդ կերպ պատահել է նաև ձեզ հետ—ի հարկէ ոչ. շատ բնական է՝ չէր էլ կարող լինել։ Հետևապէս ինչ նշանակութիւն կարող է ունենալ ձեր ներկայացրած վկայականը։ Դիլիջանի օդասուն անտառներն ու օդափոխութիւնը կարող են մի առ ժամանակ զուարթ և առողջ ցոյց տալ ձեզ. սակայն չէ կարող պատահել, որ հիւանդութիւնն յանկարծ երևան գայ իր թագատոցից, այն ևս այն ժամանակ, երբ ուսուցման ընթացքում լինէք։ Փաստերը բարձրագոյն ազգանկում են նոյնիսկ ձեր ներկայացրած վկայագրի զօրութեամբ, որ դուք ձեր երկամեայ պաշտօնավարութեան օրով թոքախտով հիւանդ էք եղել, իսկ այժմ Դիլիջանում հրաշքով լաւացել։ Ասացէք, խնդրեմ, ի՞նչ չափ բարեղձութիւն պէտք է ունենաք դուք, որ երկու հիւանդներդ, դուք և ձեր տիկինը, բնակարան անելով ուսումնարանը՝ չը խնայէք ուսանող սերնդի կեանքը։ Մի աւելի շօշափելի ապացոյց չէ նաև այն, որ ձեր տիկինը այս տարի չէ վարձվելու այն պատճառով, որ ստացած հիւանդութիւնը թոյլ չէ տալիս այլևս ուսուցչական աշխատանքի։

Ի՞նչ էք կարծում, պ. տեսուչ, ես եմ արդեօք «գզբաղդ» և «պատուազուրկ», որ իբրև հասարակութեան մի անդամը, մերկացել եմ երևոյթը և ջանացել հեռացնել վերահաս վտանգը այն դպրոցից, ուր սովորում է նաև իմ հարազատ որդին, թէ դուք, որ երկու ամբողջ տարի անդիմաբար շահագործել էք Ատրպատականի կենտր. դպրոցը և թոքախտային բացիլներ տարածել մատաղ սերնդի շնչած օդի մէջ։ Այժմ հասկացաք, որ ինձ ոչ ոք չէ դրդել, և ոչ էլ ձեր դէմ կուսակցական թէ այլ ոտնձգութիւնների պաչքաբ եմ մղում. այլ ինձ դրդողն է եղել միայն հասարակութեան շահը և մատաղ սերնդի առողջ կրթութիւնը մտաւորապէս թէ ֆիզիքապէս։

Դարձեալ կրկնում եմ, ձեր տեղը ոչ թէ դպրոցն է, այլ հիւանդանոցը, ուր հայ ժողովուրդը պարտական է ձեզ տալ իր նիւթական ու բարոյական աջակցութիւնը։

Հայկազուն

*) Մի օրինակն ևս ուղարկված է «Հօրիզոնին»։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Վարշավայից հաղորդում են, որ Զենստոխովում գրաւված են 15,000 օրինակ ջարդարարութեան կոչող գրքոյկներ։

✦ Ալբանացիների պարագլուխ Իզմայիլ Քեմալը սենատոր է նշանակված։

Типографія канцеляріи Намѣстника Его И